



ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՍԻԱՍՆԻ 2020 Թ. ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռի հրատարակչական բաժինը 2020 թ. եւս շարունակել է քարոզչական իր ուրոյն գործունէութիւնը՝ լոյս ընծայելով եւ տարածելով գիտական ու հոգեւոր-ուսուցողական գրականութիւն:

2020 թ. բռնկուած համավարակի եւ թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից Արցախում սանձազերծուած պատերազմի հետեւանքները չափազանց ծանր էին, այնուամենայնիւ, Մայր Աթոռի հրատարակչութիւնն իր աշխատակիցների նուիրումի եւ հեղինակների պատրաստակամութեան շնորհիւ կարողացաւ բնականոն (որոշ ժամանակ հեռավար) շարունակել իր գործունէութիւնը: 2020 թ. հրատարակչութիւնը լոյս է ընծայել քարոզգրքեր, աստուածաշնչագիտական եւ վարքագրական աշխատութիւններ: Հայագիտութեան շրջանակում հրատարակուել են պատմաբանասիրական, վաւերագրական, բնագրագիտական, թարգմանական բնոյթի ժողովածուներ եւ ուսումնասիրութիւններ:

Հրատարակչական բաժինն անդրադարձել է 2020 թ. յոբելեաններին՝ տպագրութեան պատրաստելով Խրիմեան Հայրիկի ծննդեան 200-ամեակին նուիրուած գրքեր: Նշենք, որ 2020 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 20-ամեակի, ինչպէս նաեւ ծննդեան 70-ամեակի առիթներով հրատարակուել են մի շարք գրքեր:

Երախտագիտութեամբ յիշենք Մայր Աթոռի հրատարակչութեան բոլոր հեղինակներին եւ աշխատակիցներին՝ խմբագիրներին, սրբագրիչներին, էջադրողներին, տպագրիչներին, կազմարարներին եւ այլոց, որոնց բարեխիղճ ու միասնական աշխատանքի շնորհիւ ընթերցողի սեղանին են դրոււմ արժէքաւոր եւ օգտակար հրատարակութիւններ: Յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում Մայր Աթոռի հրատարակչութեան մեկենասներին՝ եկեղեցանուէր գործունէութեան եւ օժանդակութեան համար:

Ըստ այսմ՝ Մայր Աթոռի հրատարակչութիւնը 2020 թ. լոյս է ընծայել.

Ա. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս. Տարեգրություն եւ կենսամատենագիտությունը (1951–2019), կազմ.՝ Տ. Արարատ ֆհնյ. Պօղոսեան, Մայա Գրիգորեան, Գոհար Սարգսեան, խմբ.՝ Տ. Արարատ ֆհնյ. Պօղոսեան:

Պարբերական մամուլը մարդկության պատմության, գիտության եւ մշակույթի օրագրային գրառումը կամ արձանագրումն է, առաւել ստոյգ՝ գրաւոր-վաւերագրային յիշողութիւնը: Այս առումով կարելոր ու անհրաժեշտ է, որ հայոց հոգեւոր առաջնորդը՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ունենայ իր տարեգրութիւնն ու կենսամատենագիտութիւնը, առանց որի մամուլում նրա մասին առկայ նիւթի գործածման արդիւնաւէտութիւնը խիստ ցածր է: Պարբերականներում հրապարակուած յօդուածների, տեղեկատուութեան մէկտեղումը, դասդասումը եւ համակարգումն ընթերցողին կօզնեն առաւել հեշտութեամբ հետեւելու Կաթողիկոսի կենաց եւ գործոց ընթացքին, գտնելու Հայրապետի մասին իր փնտրած նիւթը (քարոզ, կոնդակ, ուղերձ, շնորհաւորանք, ընդունելութեան եւ այցելութեան վերաբերեալ տեղեկութիւններ, հովուապետական ու պաշտօնական այցելութիւններ եւ այլն): Այսու, նախաձեռնելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տարեգրութեան եւ կենսամատենագիտութեան կազմումը, նպատակ ենք ունեցել մամուլում նորին Սրբութեանը վերաբերող նիւթերի որոնումն առաւել դիւրին դարձնել: Աշխատութիւնն ունի բազմապիսի օժանդակ ցանկեր:

Հրատարակութիւնը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20-ամեակին:

Բ. «Պատմութեան փառահեղ մի էջ», Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղուած յօդուածական շնորհաւորանքների, գործունէութեան վերաբերեալ յօդուածների ժողովածու, կազմ.՝ Տ. Գաբրիէլ ֆհնյ. Վարդանեան, խմբ.՝ Տ. Արարատ ֆհնյ. Պօղոսեան:

Ժողովածու, որը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունէութեան թերեւս ոչ ամբողջական լուսաբանման հերթական աշխատանքն է: Այն իւրաքանչեւ ժողովածու է, որում ի մի են բերուած «էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթում հրատարակուած՝ 1999–2019 թթ. ընթացքում Վեհափառ Հայրապետին տարբեր յօդուածական առիթներով ուղղուած շնորհաւորականները, խօսքերը եւ նրա բազմաոլորտ գործունէութեանն առնչուող գիտա-

կան եւ տեղեկատուական յօդուածները: Ժողովածուի նիւթերը կարելոր են, քանի որ արտացոլում են միջեկեղեցական, միջկրօնական, քաղաքական, հասարակական, մշակութային եւ գիտական ոլորտի նշանաւոր գործիչների եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի մասնաւորի՝ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի փոխարարներութիւնները: Ժողովածուում ընդգրկուել են Վեհափառ Հայրապետի գործունէութեան տարբեր ոլորտներին վերաբերող յօդուածներ, որոնք, ըստ էութեան, ներկայացնում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 20-ամեայ պատմութիւնը: Ժողովածուն կազմուած է խնամքով. նիւթերը խմբաւորուած են որոշակի սկզբունքով, ինչն առաւել դիւրին է դարձնում մասնագէտների եւ ընթերցողների գործը: Յօդուածները, պարբերականներում ցրուած լինելով 20 տարիների տարբեր համարներում, հնարաւորութիւն չէին տալիս պատկերը լիարժէք տեսնելու, իսկ սոյն ժողովածուի տպագրութեամբ այդ խնդիրը լուծուած է:

Հրատարակութիւնը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20-ամեակին:

Գ. Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Կոնդակներու, Բարոզներու, Խօսքերու եւ Խոհերու ընտրանի, կազմ.՝ Վարանդ Բորթմոսեան, լեզուաոճական խմբ.՝ Անի Ֆիշենկեան:

Ժողովածուն ներառում է Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի բազմաբնոյթ գրուածքները, որոնք քաղուած են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական մամուլից՝ «Էջմիածին» մամսագրի եւ «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի էջերից (սկսած Վեհափառ Հայրապետի գահակալութիւնից մինչեւ 2019 թ. դեկտեմբեր): Այս գրքում ընթերցողը կգտնի համազգային եւ յոբելեանական բնոյթի տարբեր կոնդակներ, Ա. Ծննդեան եւ Ա. Յարութեան քարոզներ, դասախօսութիւններ, մտորումներ ու խոհեր, որոնք առնչուում են ազգային, բարոյական արժէքներին, մեզ յուզող հարցերին: Վեհափառ Հայրապետի խօսքերը, թէեւ ոչ ամբողջական, առաջին անգամ են հրատարակում արեւմտահայերէն:

Հրատարակութիւնը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20-ամեակին:

Գ. Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, «Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք». Հայրապետական Խօսքեր եւ պատգամներ հայ երիտասարդին, կազմ.՝ Սեւակ սրկ. Գրիգորեան, խմբ.՝ Տ. Թովմայ վրդ. Խաչատրեան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչությունը, հայ երիտասարդի հոգեւոր սպառնալիքներին առաւել հարստացնելու համար, հրատարակել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքերի եւ պատգամների այս ընտրանի-գրքոյկը, որը կազմուած է «Էջմիածին» ամսագրում եւ «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթում լոյս տեսած քարոզներից եւ պատգամներից՝ միտուած երիտասարդների հոգեւոր ու ազգային հոգեկերտուածքի առաւել պայծառացմանը, հայրենաշինութեանն ու աստուածճանաչողութեանը: Սոյն ժողովածուում առանձնացուած են «Քրիստոնէություն», «Եկեղեցի», «Ս. Էջմիածին», «Հայրենիք», «Բանակ», «Ընտանիք», «Ազգային կեանք» եւ «Հայ երիտասարդին» բաժինները: Գրքոյկը նախաձեռնել եւ հրատարակութեան է պատրաստել ՀԵՀԵՄ-ի կենտրոնական գրասենեակը:

Հրատարակչությունը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20-ամեակին:

Ե. «Համաբարբառ Կանոնագիրք Հայոց», հրատ. պատր.՝ Արամ Մարտիրոսեան, պատասխ. խմբ.՝ Տ. Շահէ Ժ. վրդ. Անանեան:

Սա «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Ա. եւ Բ. հատորներում առկայ բոլոր կանոնների դասակարգուած ներկայացումն է: Ֆրանսերէն զուգադիր թարգմանութեամբ եւ համապատասխան տիտղոսներով ու ենթավերնագրերով տրուած են Ե.—ԺԱ. դարերում ջնադարեան Հայաստանում մշակուած եւ ընդունուած այն բոլոր կանոնները, որոնք ներառուել են «Կանոնագիրք Հայոց»-ում: Համաբարբառը նախատեսուած է Հայոց Եկեղեցու կանոնական իրաւունքի, աստուածաբանութեան, հայ ջնադարեան իրաւունքի ոլորտների մասնագէտների, ինչպէս նաեւ հայ եկեղեցական իրաւունքով հետաքրքրուողների լայն շրջանակի համար:

Հրատարակչությունը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20-ամեակին:

Զ. Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, թարգմ.՝ Մ. Խէրանեան, ուրերոդ հրատ., QR ծածկագրով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչությունը հերթական անգամ վերահրատարակել է «Նարեկ»-ի աշխարհաբար տարբերակը (աշխարհ. փոխադր.՝ Մկրտիչ Խէրանեանի), որը ոչ միայն վերանայուած է, այլեւ

Ժամանակակից միջոցներով կիրառուել է նոր մօտեցում, առաջին անգամ ընթերցողների համար հասանելի է դարձել այս աղօթագրքի միակ ամբողջական ձայնագրությունը՝ վաստակաւոր լրագրող եւ հաղորդավար Վարուժան Օլքինեանի կատարմամբ: Աղօթագրքի նշեալ ձայնագրությունը ներկայացուած է սոյն հրատարակութեան յաւելուածում՝ առանձին QR ծածկագրերով, իսկ բուն ձայնագրությունները վերբեռնուած են Ս. Էջմիածնի հրատարակութեան Youtube-եան պաշտօնական ալիքում: Սոյն ձայնագրությունը պաշտպանուած է «Հեղինակային իրաւունքի եւ յարակից իրաւունքների մասին» ՀՀ օրէնքով:

Է. Ալեքսանդր Մեն, Հին Կտակարանի ներածութիւն, թարգմ.՝ Ա. Մադոյեանի եւ Գ. Մադոյեանի, խմբ.՝ Ղեւոնդ աւ. քննյ. Մայիլեան:

Սուրբ Գրքի ներածութեան սոյն դասագիրքն իր մօտեցումներով եւ կառուցուածքային առանձնայատկութիւններով անշափ կարեւոր է արդի ժամանակներում Հին Կտակարանն ընկալելու համար, մանաւանդ որ հեղինակը բնագրային լուրջ քննութեան է ենթարկում ամէն մի գրքի վերաբերեալ եղած կարծիքները: Լինելով նաեւ լուրջ պատմաբան, եբրայագէտ եւ յունաբան՝ Ալեքսանդր Մենը ներկայացրել է հինկտակարանեան գրքերի վերաբերեալ անհրաժեշտ տեղեկութիւնները: Այս հրատարակութիւնը կարեւոր է եկեղեցական մատենագրութեան, ծիսագիրտութեան, կանոնագիրտութեան եւ աստուածաբանութեան ուսումնասիրման համար: Աստուածաշնչագիրտութիւնը եւս Որոգիներսի ու Հերոնիմոս Երանելու ժամանակներից ի վեր լայնօրէն օգտուում է գիրտութեան տարբեր բնագաւառների՝ հնագիրտութեան, լեզուաբանութեան, աղբիւրագիրտութեան տուեալներից: Մինչ վերստին յայտնագործումը Հին Արեւելքի խորհրդաւոր աշխարհի, որի ետնախորքին զարգանում էին սրբազան պատմութեան դէպքերը, Աստուածաշնչի գիտական մեկնաբանութիւնները հիմնուում էին բաւականին սահմանափակ նիւթի վրայ: Ալեքսանդր Մենի սոյն աշխատութիւնը է միտուած լրացնելու այդ բացը: Այս առումով եւս կարեւոր է ներկայացուած աշխատութիւնը, յատկապէս՝ ԳՀԺ-ի ուսանողութեան համար: Հատորն օժտուած է անձնանունների ցանկով:

Ը. «Ընտրանի ժամանակակից աստուածաբանական մտքի. Տեսական աստուածաբանութեան հարցեր», հտ. Ա., թարգմ.՝ Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան,

Յոլակ սրկ. Յարութիւնեան, Գայանէ Ալեքսանեան, Զարուհի Անտոնեան, կազմ. եւ խմբ.՝ Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան:

«Ընտրանի ժամանակակից աստուածաբանութեան» շարքի Ա. հատորը ներկայացնում է Ի.—ԻԱ. դարերի քրիստոնէական աստուածաբանական մտքի յարանուանական տարբեր ներկայացուցիչների առաւել կարեւոր ու նշանակալի երկերից քաղուած եւ տեսական աստուածաբանութեան հարցերին վերաբերող հատուածներ: Սոյն հատորն ամփոփում է աստուածաբանութեան գործիքակազմի, աստուածճանաչողութեան, Սրբազան Յայտնութեան եւ աստուածաբանական այլ հարցերի վերաբերեալ ուղղափառ (օրթոդոքս), կաթոլիկ ու արեւելեան ուղղափառ աւանդութիւնների աստուածաբանների վերլուծութիւններն ու դիտարկումները: Հատորը հասցէագրուած է ինչպէս աստուածաբաններին, այնպէս եւ ժամանակակից աստուածաբանական մտքի պատմութեամբ հետաքրքրուող լայն շրջանակին: Գիրքն ունի անձնանունների ցանկ:

Թ. Տ. Թովմայ վրդ. Խաչատրեան, Սուրբ Էջմիածին. Քրիստոնէական գմբէթաւոր առաջին տաճարը, խմբ.՝ Ա. Յարութիւնեան:

Սա անդրադարձ է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատմութեանն ու ճարտարապետութեանը՝ նախկինում կատարուած ուսումնասիրութիւնների վերլուծութեամբ եւ գնահատմամբ: Հեղինակը ներկայացնում է իր մօտեցումը, բայց նաեւ հենւում է նախորդ ուսումնասիրողներից ոմանց տեսակէտների վրայ եւ եզրակացնում, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարն ի սկզբանէ խաչաձեւ-կենտրոնագմբէթ ճարտարապետական յօրինուածքով կառույց է եղել: Աշխատութիւնը շարադրուած է գրագէտ՝ հետազօտական աշխատանքի անհրաժեշտ չափանիշների պահպանմամբ, տեղ-տեղ զգացմունքային շեշտադրումներով, որոնք հեղինակի հոգեւոր ապրումների եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ ունեցած ամբողջական նուիրումի արդիւնքն են: Միաժամանակ պահանջում է աշխատութեան գիտական հենքը, որն այս պարագայում շատ կարեւոր է: Այս նիւթը Գէորգեան հոգեւոր ճեմարանում նախապէս պաշտպանուել է որպէս աւարտաճառ (գիտ. դեկավար՝ Տ. Ասողիկ քհնյ. Կարապետեան): Գիրքը նախատեսուած է ընթերցողների լայն շրջանակի համար:

Հրատարակութիւնը նուիրուած է Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալութեան 20 եւ ծննդեան 70 ամեակներին:

Ժ. «Հայաստանի նշանաւոր վանքերը եւ եկեղեցիները», մաս Ա., կազմ.՝ Արման Մալոյեան, Մանան Մակարեան, Ովսաննա Դուդումեան, խմբ.՝ Կարէն Մաթեոսեան:

Գիրքն ունի ճանաչողական եւ տեղեկատուական նշանակութիւն, կարող է նպաստել մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակութեանը եւ համակողմանի զարգացմանը: Ընթերցողները գրքի օգնութեամբ կարող են ՀՀ մարզերի, Արցախի ու Երեւանի մասին, Հայաստանի շուրջ վեց տասնեակ նշանաւոր վանքերի ու եկեղեցիների վերաբերեալ հանգամանալից տեղեկութիւններ ստանալ, ինչպէս նաեւ մշակութային կոթողների հետ կապուած աւանդութիւններ, աւանդազրոյցներ կարդալ կամ լրացուցիչ տեղեկութիւններ քաղել՝ հարստացնելով իրենց գիտելիքները: Գրքում ներկայացուած է Հայաստանի վանքերի ու եկեղեցիների մի մասը միայն (անշուշտ, այս շարքը շարունակելի է. միւս վանքերն ու եկեղեցիները կներկայացուեն յաջորդ հատորներում): Գիրքն օգտակար կլինի նաեւ ուսուցիչների, աշակերտների, սփիւռքահայերի, զբօսաշրջիկների եւ զբօսավարների համար, կնպաստի մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակութեանը:

ԺԱ. «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան. Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1820–1892–1907)», գիրք ԻԲ., մաս Բ., «Փաստաթղթերի ժողովածու», կազմ.՝ Գոհար Աւագեան, խմբ.՝ Ամատունի Վիրաբեան:

Մայր Աթոռի հրատարակչութիւնն ընթերցողի ուշադրութեանն է ներկայացնում «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» մատենաշարի հերթական հատորը: Սոյն հատորում հանգամանօրէն նարկայացուած են Մկրտիչ Ա. Վանեցու հոգեւոր գործունէութեանը վերաբերող արձանագրութիւններ, յիշատակուած են նաեւ այն լայնածաւալ աշխատանքները, որոնք հայրապետն իրականացրել է ազգային խնդիրների լուծման ուղղութեամբ: Ժողովածուն վաւերագրական արժէքաւոր նիւթ է տրամադրում կաթողիկոսի կեանքի բոլոր փուլերի, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցու պատմութեան առանցքային մի շարք հարցերի վերաբերեալ: Հատորում ամփոփուած նիւթերի ժամանակաշրջանը վերաբերում է 1857-ից մինչեւ 1920 թուականներին: Սոյն հատորը նուիրուած է Խրիմեան Հայրիկի ծննդեան 200-ամեակին:

ԺԲ. Եղիշէ աւ. ֆհն. Սարգսեան, Դրուագներ Հայ Եկեղեցու պատմութեան, մասնագիտ. խմբ.՝ Պ. Բարսեղեան, լեզուաոն. խմբ.՝ Գ. Մադոյեան:

Գիրքը Տ. Եղիշէ աւ. քհն. Սարգսեանի՝ ԳՀԾ-ում «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկայի երկարամեայ դասական դման ընթացքում կազմուած դասախօսութիւնների ամփոփ եւ վերանայուած տպագիր տարբերակն է: Մայր Աթոռի հրատարակչութիւնը, հոգեւոր-կրթական հաստատութիւններում ընկալեալ բարի ականդոյթին հետեւելով, նախաձեռնել ու տպագրել է ԳՀԾ-ի անուանի դասախօսի կարգացած նիւթերը, որոնք կարող են ճամարանականների համար առարկայի սերտման լրացուցիչ աղբիւր լինել: Ցաւ ի սիրտ, գրքի հրատարակութիւնը ձեռնարկուեց շատ ուշ, երբ արժանապատիւ Տէր Հայրը զառամեալ տարիքում էր ու այլեւս չէր կարող երբեմնի հետազօտական բժախնդրութեամբ եւ նախկին աւիւնով կատարել գործը: Հրատարակութեան պատրաստելիս փորձ է արուել նուազագոյնի հասցնել միջամտութիւնը, որեւէ կերպ չվնասել ընդհանուր կառուցուածքը: Վստահ ենք, որ այս գիրքն օգտակար կլինի ընթերցող լայն շրջանակի, յատկապէս՝ դպրոցականների, ուսուցիչների, սփիւռքահայերի, զբօսավարների համար:

ԺԳ. Աւոյեան Սաթենիկ, Ռուսական կառավարութեան կրօնական փաղափականութիւնը Այսրկովկասի Հայ Առաքելական, Վրաց Ուղղափառ Եկեղեցիների եւ մուսուլմանական հոգեւոր կազմակերպութիւնների նկատմամբ (1903–1914 թթ.), խմբ.՝ Վ. Թունեան եւ Տ. Արարատ ֆհնյ. Պօղոսեան:

Ի. դարի առաջին տասնամեակում Ռուսական կայսրութիւնում գործում էին կրօնական բազմաթիւ համայնքներ: Այդ բարդ ու յաճախ վտանգաշատ համակարգը ղեկավարելու համար անհրաժեշտ էր մշակել զգուշաւոր եւ արդիւնաւէտ քաղաքականութիւն: Այդ ծիրից ներս առանձնայատուկ էր Այսրկովկասը: Հեղինակն ուսումնասիրել է 1903–1914 թթ. Այսրկովկասում Հայոց Եկեղեցու, վրացական էկզարխութեան եւ մահմեդական կրօնական կազմակերպութիւնների նկատմամբ ռուսական կառավարութեան իրականացրած քաղաքականութեան պատմութիւնը: Ուսումնասիրութեան մէջ արխիւային փաստաթղթերի, ժամանակի մամուլի եւ գրականութեան հիման վրայ քննարկուող թեման ներկայացուած է նորովի: Աշխատութեան հեղինակը փորձում է հիմնաւորուած ներկայացնել Ռուսիոյ մէջ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնայատուկ կարգավիճակն ուղղափառ եւ այլադաւան

կրօնական կառույցների շարքում: Այսօր կրօնական քաղաքականութեան պատմութեան ուսումնասիրումն ունի ինչպէս գիտական, այնպէս եւ կիրառական կարեւոր նշանակութիւն: Յետխորհրդային տարիներին արմատական փոփոխութիւններ կրեցին անկախութիւն ձեռք բերած հանրապետութիւնների պետական եւ հասարակական համակարգերը, ինչը դրական շօշափելի ազդեցութիւն ունեցաւ Եկեղեցի-պետութիւն փոխյարաբերութիւնների վրայ: Նշեալ երկու կառույցների կապը կարեւոր նշանակութիւն ձեռք բերեց ինչպէս պետութեան ներքին կեանքում, այնպէս եւ արտաքին՝ միջազգային ու միջպետական յարաբերութիւններում: Վստահաբար, գիրքն օգտակար է լինելու ընթերցող լայն շրջանակի, յատկապէս՝ Ի. դարասկզբի եկեղեցական պատմութեան մասնագէտների համար:

ԺԴ. Շուշան Խաչատրեան, Հայոց ցեղասպանութեան հետազոտման խնդիրները, խմբ.՝ Ա. Սահակեան:

Մենագրութեան մէջ ուսումնասիրուած է Հայոց ցեղասպանութեան իրագործման կրօնական կողմը՝ իբրեւ գործօն ու գործիք՝ դիտարկելով պատմակրօնագիտական լոյսի ներքոյ: Սոյն դիտանկիւնով ուսումնասիրութիւն՝ գիտակարգային ուղղուածութեամբ, գործիքական զմով, հարցադրումների ու քննութեան առնուած խնդիրների ամբողջականութեամբ, առաջին անգամ է կատարուում: Ի մի են բերուել եւ քննութեան են առնուել ցայսօր սակաւ ուսումնասիրուած ջիհադի կոչերը՝ առաջին անգամ իրականացնելով դրանցից որոշների հայերէն թարգմանութիւնն ու հրատարակութիւնը: Ուսումնասիրութեան առանձին դրոյթներ ու եզրակացութիւններ կարող են օգտագործուել բուհական կրթական համակարգում՝ մասնագիտական որոշակի ոլորտներում: Սոյն հետազոտութիւնը կարող է իր նպաստը բերել Հայոց ցեղասպանութեան միջազգային յետագայ ճանաչման գործում եւ Ժխտողականութեան դէմ պայքարում: Ուսումնասիրութեան դրոյթները գիտակարգային, այն է՝ պատմակրօնագիտական եւ աստուածաբանական նշանակութիւն ունենալուց զատ, կարող են օգտակար լինել քաղաքական վերլուծութիւնների համար: Ուստի, սոյն հետազոտութիւնը կարող է հետաքրքրել ցեղասպանութեան ուսումնասիրմամբ զբաղուող մասնագէտներին, կրօնագէտներին, աստուածաբաններին, պատմաբաններին, արեւելագէտներին, քաղաքագէտներին, հոգեբաններին:

ժԵ. Ստաւրոս Կալանձակիս, Հին Կտակարանի ներածութիւն, թարգմ.՝ Տ. Գաբրիել Բնյ. Վարդանեան, խմբ.՝ Ս. Առուշանեան:

Սոյն աշխատութիւնը հեղինակի երկարամեայ դասախօսական ու գիտահետազոտական գործունէութեան վերանայուած ամփոփումն է, ուստի եւ ունի ուսումնասօթանդակ մեծ կարեւորութիւն ուղղափառ (օրթոդոքս) աստուածաբանական բարձրագոյն հաստատութիւններում: Գիրքն աչքի է ընկնում համակողմանի դիտարկումներով, կարեւորում են ոչ միայն Հին Կտակարանի գիտաքննական ու բնագրային առանձնայատկութիւնները եւ դրանցից ածանցուած հիմնախնդիրները, այլ նաեւ Եկեղեցում, աստուածաբանութեան մէջ Հին Ուխտի կիրառութեան հիմնական գծերը: Գրքի հայերէն թարգմանութիւնն արուած է խնամքով, առկայ են ծանօթագրութիւններ հայ ընթերցողի համար, հայկական միջավայրի հետ տեղայնացման յաջողուած փորձեր: Մեծածաւալ այս աշխատութեան թարգմանութիւնը կարող է ծառայել որպէս ուսումնասօթանդակ ձեռնարկ ԳՀԾ-ում՝ թէ՛ բակալաւրիատի եւ թէ՛ մագիստրատուրայի մասնագիտական հոսքերի համար: Հատորն ունի օժանդակ ցանկեր:

ժԶ. «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԻԳ., «Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան. Փաստաթղթերի ժողովածու», կազմ.՝ Գ. Աւագեան, խմբ.՝ Ա. Վիրաբեան:

Մատենաշարի այս հատորը նուիրուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան ականաւոր եւ բազմերախտ անդամ Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեանին: Հրատարակուած վաւերագրերը ո՛չ միայն ներկայացնում են նրա կեանքն ու գործունէութիւնը, այլ նաեւ լուսաբանում են ժամանակի Հայ Եկեղեցու պատմութեան գրեթէ բոլոր առանցքային հարցերը: Ժողովածուի գիտատեղեկատուական համակարգը բաղկացած է վաւերագրերի բովանդակային ծանօթագրութիւններից, կենսագրական բառարանից, անձնանունների եւ տեղանունների բացատրագրերով ցանկերից, փաստաթղթերի ցանկից: Ծանօթագրութիւնների համար օգտագործուել են ինչպէս արդէն իսկ հրատարակուած գրականութիւնն ու տարբեր բառարաններ, այնպէս եւ արխիւային բազմաթիւ սկզբնաղբիւրներ: Աշխատութիւնը հասցէագրուում է պատմաբաններին, աստուածաբաններին եւ առհասարակ հայագէտներին:

Ժէ. Վրէժ Վարդանեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ Ս. Սահակ Պարթևը դարաշրջանի հոլովոյթում, իմք.՝ Վ. Թորոսեան:

Գրքի առաջին մասում հեղինակն ուսումնասիրութեան նիւթ է դարձնում Ս. Գրիգոր Լուսաւորիչի արգասաւոր գործունէութիւնը, որի փառապսակն են Հայոց քրիստոնէական դարձը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նուիրապետական կառոյցի ձեւաւորումը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնարկումը, եկեղեցական-վանական ընդլայնուած համակարգի ստեղծումը, ժողովրդին հոգենորոգ գաղափարներով զինելը: Նրա փոթորկաշունչ կեանքը հայրենիքին բոլորանուէր ծառայելու վառ օրինակ է: Գրքի այս մասում հեղինակն անդրադառնում է մի շարք կարեւոր խնդիրների, որոնք վերաբերում են Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմական ծագմանը, շարժարանքներին ու բանտարկութեանը, ձեռնադրութեանը, քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելուն, հեթանոսութեան դէմ պայքարին, Վիրքում եւ Աղուանքում քրիստոնէութիւն քարոզելուն, նուիրապետական համակարգի ձեւաւորմանը եւ այլն: Աշխատութեան երկրորդ մասում հեղինակն անդրադառնում Ս. Սահակ Ա. Պարթևի հայրենանուէր գործունէութեանը: Հեղինակը ցոյց է տալիս, թէ ինչպէս Հայոց հայրապետի շնորհիւ Հայաստանը պահպանեց եւ ամրապնդեց իր հոգեւոր դիմագիծը, քրիստոնէական հաւատը, մնաց ինքնուրոյն ու աննուաճ նաեւ քաղաքական ասպարէզում: Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ Ս. Սահակ Պարթևի ջանքերով Հայոց Եկեղեցին նաեւ հետեւողական ու անզիջում պայքար ծաւալեց կրօնական մոլորաշաւիղ հոսանքների եւ աղանդների դէմ: Ս. Սահակի իմաստուն պատգամները, ապագային հայող գաղափարներն իրենց լուսեղէն թելերը տարածեցին Հայոց աշխարհի վրայ՝ հովանի լինելով հայ ազգին: Մահականացուն կնքելուց յետոյ էլ նա մնաց հայրենի մտաւոր անդաստանի լուսաւորողը՝ դառնալով իր փառապանծ տոհմի յաւերժող պատգամախօսը: Աշխատութիւնը գրուած է սկզբնաղբիւրների համակողմանի ուսումնասիրման եւ վերլուծութեան հիման վրայ: Հեղինակն օգտագործել է նաեւ խնդրոյ առարկայ նիւթին վերաբերող կարեւոր աղբիւրներ:

ԺԹ. Բօգոյեան Ազատ, Եղիազարեան Արման, Թանանեան Գրիգոր, Յակոբեան Ալեքսան, Յարութիւնեան Գագիկ, Մարութեան Յարութիւն, Միրզոյեան Նարինէ, Մովսիսեան Արտակ, Վաղարշեան Արթուր, Սահմանադրական մշակոյթի արժեքանական ակունքները քրիստոնոսութիւնն առաջինը պետական կրօն ընդունած ժողովրդի հազարամեայ տաքերութեան

ծախերում, ժողովածու, խմբ.՝ Գ. Յարության, Ա. Մովսիսյան եւ Տ. Արա-
րատ ֆհնյ. Պոլոսեան:

Այս ծաւալուն աշխատութիւնը ներկայացնում է հայկական հնա-
գոյն թագաւորութիւններից (սկսած Ք. ծ. ա. Գ. հազարամեակից) մինչեւ
մեր օրերի հանրային յարաբերութիւնների զարգացման տարբեր ծալ-
քերն ու առանձնայատկութիւնները, աշխարհաժողովների, ապա ազգա-
յին-եկեղեցական ժողովների, դրանց ընդունած կանոնական որոշումնե-
րի իրաւագիտական դերն ու նշանակութիւնը: Համեմատական համա-
կողմանի վերլուծութեան շրջանակում ներկայացւում են Վաղարշապա-
տի, Աշտիշատի, Շահապիւանի, Դուինի, Կարնոյ, Աղուենքի, Պարտաւի,
Մանազկերտի, Շիրակաւանի, Անիի, Հաւրքի, Լոռու, Ձագաւանի, Շուղրիի,
Հոռմկլայի, Տարսոնի, Սսի, Ադանայի ազգային-եկեղեցական ժողովնե-
րը, «Կանոնագիրք Հայոց»-ը, Սահակ Պարթեւի, Դաւիթ Ալաւկաորդու,
Ներսէս Շնորհալու, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի իրաւագի-
տական ժառանգութիւնը, լեհահայոց եւ Ասորախանի հայոց դատաս-
տանագրքերը, Շահամիրեանների «Որոգայթ փառաց»-ը, արեւմտահա-
յոց ազգային սահմանադրութիւնը: Յատուկ ուշադրութիւն է դարձւում
նաեւ Արցախեան շարժման նախօրէին եւ ընթացքում սահմանադրական
պայքարի դրսեւորումներին:

Ի. Քլայվ Մարշ, Ստիւ Մոյզ, Յիսուս եւ Աւետարանները, թարգմ.՝ Տ. Գեւորգ
Եպս. Սարոյեան, լեզուաւ. խմբ.՝ Գեւորգ Մադոյեան:

Գիրքը վերաբերում է Յիսուս Քրիստոսին. նա ապրել է աշխարհագ-
րական մի տարածքում՝ յայտնի Պաղեստին անուամբ, մի ժամանակաշր-
ջանում, որը, ըստ արեւմտեան օրացոյցի, «առաջին դար» է կոչւում: Բա-
ւականին շատ վկայութիւններ կան Նրա կեանքի վերաբերեալ, թէպէտ,
ինչպէս իւրաքանչիւր պատմական անձի դէպքում, այն պարզ եւ անպա-
ճոյճ չի ներկայացուած: Ըստ հեղինակի՝ եթէ նոյնիսկ պատմաբանները
դրա հետ աշխատելու կարիք ունեն, ապա պէտք է կարողանան ներկա-
յացնել Նրա կեանքի ուրուագիծը: Բայց սոյն գրքում հեղինակի ջանքե-
րով ընթերցողներն աւելին կգտնեն, քան պարզապէս ուրուագիծը: Աշ-
խատութիւնը կարող է պատասխանել հետաքրքրասէր ընթերցողների
տարաբնոյթ հարցերին: Հայ ընթերցողի համար այս հարցերը, անշուշտ,
գրաւիչ են, եւ սոյն թարգմանութիւնը հնարաւորութիւն է ընձեռում
գտնելու տարաբնոյթ խնդիրների վերլուծութիւնն ու պատասխանը:

ԻԱ. Վարդան Դեւրիկեան, Սրբոց տօներին նուիրուած գանձարանային կանոնները (խլաթեցիական եւ յետխլաթեցիական շրջանի գանձարաններում):

Գրքում ներկայացւում են «գանձարան» ժողովածուի՝ Գրիգոր Խլաթեցու կատարած խմբագրութեան եւ յաջորդող շրջանում «գանձարան» ժողովածուում Տիրամօրն ու սրբոց տօներին նուիրուած նոր գանձերը, որոնք գրուել են ԺԴ.–ԺԷ. դարերում: Աշխատութեան ներածութեան մէջ նշուում է, թէ ինչ սկզբունքով եւ որ ձեռագրերից են ընտրուել յիշեալ գանձերը, ապա ներկայացւում է այդ ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը: Ժողովածուի հիմնական մասը բնագրերն են, որոնք հրատարակուում են առաջին անգամ, քանի որ նախկինում գանձերի հրատարակութեան ժամանակ իշխել է վերջիններիս առաւելապէս գեղարուեստական արժանիքները կարեւորելու չափանիշը եւ ոչ թէ տօնացուցային տուեալ թեման իր պատմական զարգացման մէջ դիտարկելը: Գանձերի հրատարակութիւնն իրականացուել է համեմատական բնագրի կազմման սկզբունքով: Ծանօթագրութիւնների բաժնում բացատրուած եւ ներկայացուած են իւրաքանչիւր բնագրի տողերի գեղարուեստական առանձնայատկութիւնները, դրանց համար աղբիւր ծառայած ստեղծագործութիւնները: Նոյն ձեւով ծանօթագրուած են յիշեալ բոլոր աւանդութիւնները, տեղանունները եւ անձնանունները: Նման աշխատանքը նպաստում է իւրաքանչիւր ստեղծագործութեան թէ՛ գեղարուեստական, թէ՛ եկեղեցական ու պատմաբանասիրական առումով առաւել ամբողջական ընկալմանը:

ԻԲ. «Աստծու Օծեալը», պատի օրացոյց 2021 (նուիրուած Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 70-ամեակին), կազմ.՝ Տ. Ասողիկ արք. Կարապետեան:

ԻԳ. «Օրացոյց. 2021», պաշտօնական, կազմ.՝ Տ. Միքայէլ արք. Աջապահեան:

Ներկայացնում է ողջ տարուայ ծիսատօնական համակարգը՝ ներառելով եկեղեցական բոլոր տօները, սրբոց յիշատակութեան օրերը: Բացի նշուածներից՝ ընդգրկում է նաեւ տեղեկութիւններ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան միաբանների, տարբեր խորհուրդների եւ յանձնաժողովների անդամների, ինչպէս նաեւ Մայր Աթոռի պաշտօնէութեան վերաբերեալ:

ԻԴ. «Սեղանի օրացոյց. 2020»:

Ներկայացնում է ողջ տարուայ ծիսատօնական համակարգը՝ ներառելով եկեղեցական բոլոր տօները, սրբոց յիշատակութեան օրերը եւ սրբերի համառօտ վարքը: Տեղեկութիւններ է ներառում Ամենայն Հայոց կաթողիկոսութեան միաբանների, տարբեր խորհուրդների եւ յանձնաժողովների անդամների, ինչպէս նաեւ Մայր Աթոռի պաշտօնէութեան վերաբերեալ:

Պատրաստեց

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԶՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆԸ

